ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
N 02/19

ք. Եղեգնաձոր «25» հունվարի 2019թ

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղար Կ.Սահակյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրատու, մի կողմից և Եղեգնաձորի 'Մշակույթի կենտրոն' ՊՈԱԿ-ը' ի դեմս տնօրեն Մարո Սիմոնյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Նվիրառու, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2018թ թիվ 1515-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պահպանման ծախսերի համար հատկացնում է 2782.3 հազ. / երկու մլն յոթ հարյուր ութսուներկու հազար երեք հարյուր / ՀՀ դրամ , այդ թվում ԱԱՀ-ն :

2.Գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան :
2.2.Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պատվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:
2.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը ըստ հավելվածի փոխանցում է Կատարողի գանձապետական հաշվին:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ , որը կնքվում է գրավոր:
4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Նվիրատու

_Վայոց Ձորի մարզպետարան__

Ք.Եղեգնաձոր Շահումյան 5

ՀՀ ֆինանսի գործառնվարչ
h/h 900351022021

հվհհ 08907717

Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

Նվիրառու

Եղեգնաձորի'Մշակույթի կենտրոն' ՊՈԱԿ

Ք.Եղեգնաձոր Մոմիկի 6

ՀՀ ֆինանսի գործառնվարչ
hh 900358000396

հվհհ 08900537

Մ. ՍԻՄՈՆՅԱՆ